ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

29 մայիսի 2015 թվականի **թիվ 11** քաղ. Բուրաբայ

Եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորման մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29–ի պայմանագրի 92–րդ հոդվածի 9-րդ կետի, Արդյունաբերական համագործակցության մասին արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29–ի պայմանագրի 27-րդ հավելված) իրագործման, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2013 թվականի մայիսի 31–ի թիվ 40 որոշմամբ սահմանված ուղղություններով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների համագործակցության կազմակերպման նպատակով՝

1. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կառավարություններին՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ համատեղ մինչեւ 2015 թվականի դեկտեմբերի 1-ը մշակել եւ ապահովել հետեւյալ փաստաթղթերի ներկայացումը Եվրասիական միջկառավարական խորհրդի քննարկմանը՝

եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորման եւ գործունեության մասին հիմնադրույթի նախագիծը, որը ներառում է դրանց ֆինանսավորման մեխանիզմները.

եվրասիական տեխնոլոգիական հարթակների ցանկի նախագիծը՝ ըստ

ոլորտային ուղղությունների:

2. Սույն Կարգադրությունն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**